«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Լուսիկ Հովհաննիսյան

Մանկապարտեզ՝ «64» ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն-3

- Խաղը , նրա դերն ու նշանակությունը երեխայի կյանքում-4
- Խաղերի տեսակները, նրանց դերն դաստիարակության , ուսուցման մեջ
- Դերային խաղերի յուրահատկությունները-6
- Հետազոտական աշխատանք-9
- Եզրակացություն-14
- Գրականության ցանկ-15

Ներածություն

Իմ Նախընտրած թեմայի համար օգտվել եմ տարբեր գրականությունից:

Երեխայի զարգացման գործում հսկայական է խաղի առաջատար գործունեության դերը: Խաղը ՝ որպես ամենառաջատար և ամենակարևոր գործունեություն, իրենց մտքերն են արտահայտել շատ փիլիսոփաներ, հոգեբաններ, մանկավարժներ: Հայ մեծ գրող, մանկավարժ Խ. Աբովյանը պահանջում էր չզրկել երեխային <<անմեղ խաղերից>>: Նա ընդգծում էր, որ երեխան կյանքի ու բնության վերաբերյալ արագ տեղեկություններ է ստանում հեքիաթների, պատմությունների, զրույցների, խաղալու և շփվելու միջոցով:

Հայ մեծ բանաստեղծ Թումանյանը գտնում է, որ մարդու համար խաղը <<բնական օրգանական պահանջ է>>, նրա լրջությունը, նրա էությունը... կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քնում, խաղով է ճանաչում և ընդունում...

Հայ մանկավարժական մտքի ամենախոշոր ներկայացուցիչներից Ղ. Աղայանը իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերեց մանկավարժության տեսությանն գործնական աշխատանքին: Ղ.Աղայանը խաղն ու երգը համարում էր երեխայի հիմնական պահանջ, որ երեխային խաղերից զրկելը հանցագործություն է: Խաղի հիմնահարցը հետաքրքրել է նաև մի շարք հոգեբանների՝ Լ. Ս. Վիգոտսկուն, Ա.Ն. Լեոնտևին, Ա.Լ. Ռուբինշտեյնին, Դ. Բ. Էլկոնինին, Ա. Վ. Զապարոժեցին և շատ ուրիշների, որոնց հետազոտությունները նպաստեցին խաղի տեսության զարգացմանը:

Դերային խաղն եմ ընտրել իմ թեման, քանի որ իմ հետազոտական աշխատանքը կատարել եմ միջին խմբում (4-5 տ.) , իսկ ամենառաջատար գործունեությունը այս տարիքում սյուժետադերային խաղն է:

Դերային խաղը ավելի մոտ է իրականությանը, երեխան վերարտադրում է իրեն լավ ծանոթ իրավիճակներն ու հարաբերությունները: Այս խաղերը սովորաբար մեծերի կյանքի մանկական մեկնաբանություններ են, որոնցում դրսևորվում է փոքրերի

վերաբերմունքը մեծերի <<խաղի>> նկատմամբ: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է այն, ում նա ընդօրինակում է:

Հետազոտական աշխատանքի թեման է՝ <<Մասնագիտություն>> , որը իրականացրել եմ խոսքի զարգացման պարապմունքի ընթացքում: Ավարտել եմ օգտված գրականության ցանկով, հեղինակներով:

Տեսական մաս

Գլուխ 1

1. Խաղը , նրա դերն ու նշանակությունը երեխայի կյանքում

1.1 Խաղերի տեսակները և նրանց դերն ու տեղը երեխաների դաստիարակության և ուսուցման մեջ:

Ուսումնասիրելով խաղի հիմնահարցը՝ մի շարք հոգեբաններ, մանկավարժներ տարբեր ձևով մեկնաբանեցին նաև խաղի դասկարգման հարցը: Սա բացատրվում է նրանով, որ երեխաների խաղերը շատ բազմազան են, հետևաբար և նրանց խմբավորումը , դասակարգումը բարդ է:

Խաղերի տեսակների մասին 19-րդ դարի վերջին խոսել է Գրոոսն իր <<Երեխաների հոգեկան կյանքը>> գրքում:

Ժ. Պիաժեն ուսումնասիրելով սիմվոլի ձևավորումը, կանգ է առնում նախ խաղերի տեսակների վրա՝ նշելով հատուկ դերային խաղերը (մինչ 4 տարեկանը) և կանոններով խաղերը (7 տարեկանից հետո):

Ականավոր ռուս բժիշկ-մանկավարժ Պ.Ֆ. Լեզգաֆտը, մեծ կրթադաստիարակչական նշանակություն տալով հատկապես շարժական խաղերին, առաջարկում է ընդհանուր դասկարգում՝ ընտանեկան (նախադպրոցական տարիքի երեխաներին հատուկ) և դպրոցականներին հատուկ խաղեր:

Ն. Կ. Կրուպսկայան ևս, ուսումնասիրելով խաղերի հիմնական տեսակները, առանձնացնում է երեխաների կողմից հնարած խաղերը՝ սյուժետա-դերային, ստեղծագործական և կանոններով:

Նախադպրոցական մանկավարժությունը խաղի դասակարգման հիմքում դնում է այն փաստը, որ խաղերը տարբերվում են իրենց բովանդակությամբ, բնորոշ առանձնահատկություններով, նրանով, թե ինչպիսի տեղ են զբաղեցնում երեխաների կյանքում:

Այսպիսով, խաղերի տեսակներից են սյուժետա-դերային խաղերը, որոնք երեխաները իրենք են ստեղծում դաստիարակի որոշ ղեկավարությամբ: Նրանց հիմքում ընկած է մանկական ինքնագործունեությունը: Այս խաղերը հաճախ անվանվում են ստեղծագործական սյուժետա-դերային խաղեր, քանի որ այստեղ երեխաները ոչ թե լոկ ընդօրինակում և վերարտադրում են այս կամ այն երևույթը, այլև ստեղծագործաբար գիտակցում են և վերարտադրում ստեղծվող կերպարներում, խաղային գործողություններում:

Այս խմբին են պատկանում նաև խաղ-բեմականացումները և կառուցողական խաղերը:

Հաջորդ խումբը կանոններով խաղերն են , որոնք երեխաների համար ստեղծում են մեծերը: Սրանց են պատկանում դիդակտիկ, շարժական խաղերը, ինչպես նաև խաղ-զվարճանքները: Այս խաղերը լայնորեն օգտագործվում են երեխաների դաստիարակության գործընթացում: Նրանց հիմքում ընկած է խիստ որոշակի ծրագրային բովանդակություն, դիդակտիկական խնդիրներ, ուսուցման նպատակադրվածություն: Այստեղ, իհարկե , երեխաների ինքնագործունեությունը չի բացառվում, սակայն այն առավել զուգակցվում է դաստիարակի հսկողության,

ղեկավարման հետ: Խաղալու փորձ, ինքնակազմակերպման ընդունակություն ձեռք բերելու հետ մեկտեղ, երեխաները այս խաղերը ևս ինքնուրույն են կազմակերպում և անցկացնում:

1.2 Դերային խաղերի յուրահատկությունները

Սյուժետա-դերային խաղերն առավել բնորոշ են նախադպրոցական տարիքի երեխաներին և նրանց կյանքում զգալի տեղ են գրավում:

Բազմաթիվ մանկավարժներ և հոգեբաներ ընդգծում են խաղի նշանակությունը աշխարհը ճանաչելու և ստացած տպավորություններն ավելի լավ և խորը յուրացնելու գործում: Նշվում է , որ ստեղծագործական խաղերը երեխաների կողմից առավել սիրվածներից են: Այստեղ նրանք նպատակներ են դնում և այնպես խաղում, որպեսզի հասնեն այդ նպատակներին: Երեխաները ծրագրեր են կազմում, ընտրում խաղային խնդիրները իրականացնելու միջոցներ:

Ստեղծագործական խաղերը ծառայում են երեխաների անձնավորության ձևավորմանը, և այդ է պատճառը, որ նրանք դիտվում են որպես դաստիարակության կարևոր միջոց:

Այս խաղերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երեխաներն իրենք են ստեղծում խաղը, և խաղային գործունեությունըկրում է ընդգծված ինքնագործ, ստեղծագործական բնույթ: Խաղը կյանքի արտացոլումն է: Այստեղ իշխում է <<ես կլինեմ>> կարծեք թե պայմանական միջավայրը, որը ստեղծվում է երեխաների երեվակայությամբ և ուր, սակայն, իրականը շատ է. խաղացողների գործողությունները միշտ ճշմարիտ են, նրանց զգացմունքները, ապրումները՝ անկեղծ ու պարզ: Երեխան քաջ գիտակցում է , որ տիկնիկը, շնիկը, արջուկը լոկ խաղալիքներ են, սակայն սիրում է նրանց այնպեսմ ինչպես եթե նրանք կենդանի լինեն, նա հասկանում է, որ <<կլինի>> օդաչու, համարձակ տիեզերագնաց, որը ոչնչից չի վախենում, հպարտանում է իր սխրագործություններով: Այսինքն երեխան տարբեր երևույթներ, գործողություններ, հարաբերություններ իր խաղերում ակտիվ և յուրահատուկ ձևով է արտահայտում: Վերջինս բացատրվում է երեխաների ըմբռնման, տարբեր փաստերը, երևույթները,

կապերը հասկանալու, գիտակցելու առանձնահատկություններով, փորձի առկայությամբ կամ բացակայությամբ:

Բնորոշելով սյուժետա-դերային խաղերը՝ ռուս հոգեբան Դ. Բ. Էլկոնինը նշում է , որ այստեղ երեխաներն իրենց վրա են վերցնում մեծերի դերերը և հատուկ ստեղծված պայմաններում ընդհանրացված ձևով վերարտադրում նրանց գործունեությունը, փոխհարաբերությունները: Մեծերի ընդօրինակելը կապված է երևակայության հետ, սակայն հավատալով խաղի իրականությանը, երեխան ստեղծում է յուրահատուկ խաղային կյանք և անկեղծ ուրախանում կամ տխրում այդ ընթացքում: Երեխան ունի ակտիվ հետաքրքրության մարդկանց, կենդանիների, կյանքի երևույթների նկատմամբ, ինչպես նաև հասարակայնորեն արժեքավոր գործունեության պահանջմունք: Այս բոլորը բավարարում է խաղի միջոցով:

1.3 Ականավոր գործիչները դերային խաղերի մասին

Ականավոր ռուս հոգեբան Լ.Ս. Վիգոտսկին իր <<Խաղը և նրա դերը երեխաների հոգեկանի զարգացման գործում>> հոդվածում հատուկ ուսումնասիրում է դերային խաղը: Նա նշում է , որ այս խաղի ուղղվածությունը ապագա սոցիալական գործունեությունն է, որ խաղի միջոցով երեխաներն անցնում են իրենց ապագա սոցիալական զարգացումը, ուստի և խաղը <<սոցիալական հարաբերությունների թվաբանությունն է>>:

Ա. Ն. Լեոնտևը մեծ տեղ է հատկացնում դերային խաղերին՝ երեխաների զարգացման գործում դիտելով այն որպես շրջապատող աշխարհը ճանաչելու, հասկանալու միջոց:

Ա. Վ. Զապորոժեցը ստեղծագործական խաղը համեմատում է հեքիաթի հետ՝ նշելով, որ երկուսն էլ սովորեցնում են երեխաներին ներծծվել կերպարների զգացմունքներով, մտքերով, հույզերով:

Սյուժետա-դերային խաղերի յուրահատկություններից է նրանց լավատեսական, կենսուրախ բնույթը: Այստեղ բոլոր դժվար գործերը միշտ հաջողությամբ են ավարտվում:

1.4 Դերային խաղերի ղեկավաումը

Խաղերի այս տեսակի ղեկավարումը պահանջում է մեծ վարպետություն և մանկավարժական տակտ: Դաստիարակի հիմնական դերը կազմակերպչականն է: Խաղում երեխաները դրսևորում են ինքնուրույնություն, սակայն դա չի ժխտում մանկավարժական ղեկավարման անհրաժեշտությունը: Խաղը կազմակերպված մանկավարժական գործընթաց է: Ահա թե ինչու սխալվում են այն դաստիարակները, որոնք անտարբերություն, պասիվություն են ցուցաբերում երեխաների խաղերի ղեկավարման հարցում կամ չափից ավելի ակտիվություն, երբ երեխաները պարտադիր պետք է խաղան այն սյուժեով , որն ամենևին նրանց չի հետաքրքրում:

Պարապմունքների , էքսկուրսիաներ, զրույցների ընթացքում ստացած գիտելիքները, տպավորությունները պետք է որոշ ժամանակ մնան երեխաների գիտակցության , զգացմունքների մեջ: Ահա թե ինչու նպատակահարմար չէ երեխաներին դրդել անմիջապես այն վերարտադրել խաղերում:

Դաստիարակչական ներգործությունը խաղի ժամանակ մեծահասակը իրականացնում է դերերի միջոցով: օրինակ՝ <<Բժիշկ-բժիշկ >> խաղի ժամանակ դաստիարակը հարցնում է, որտեղ կարելի է նստեցնել հիվանդին, ով պետք է չափի նրա ջերմությունը, որ նա շնորհակալություն հայտնի բժշկին, իսկ վերջինիս՝ սիրալիր վերաբերմունք ցույց տա հիվանդին:

Ղեկավարման կարևոր տարրերից է այն, որ ավարտից հետո դաստիարակը քննարկում է խաղը, նշելով երեխաների դրական փոխհարաբերությունները, որը նպաստում է հետագա խաղերի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը:

Երեխաների խաղն աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով: Նրանց հիմնականը այն է, որ խաղը երեխաների կողմից շրջապատող կյանքի՝ մեծերի գործողությունների, գործունեության, նրանց փոխհարաբերությունների արտացոլումն է , ընդ որում այնպիսի պայմաններում, որոնք ստեղծվում են երեխաների երևակայությամբ:

Խաղի առանձնահատկություններից է այն, որ երեխան հավատով է լցված և ճշմարիտ է համարում հորինված խաղի բովանդակությունը:

Խաղի նշված բնույթն է, որ տարբերվում է այն մանկական գործունեության մյուս տեսակներից և ինչ-որ չափով մոտեցնում արվեստին , իրականության կերպարային արտացոլմանը:

Գլուխ 2

Հետազոտական աշխատանք

Խոսքի զարգացում

<<Մասնագիտություն>>

Միջին խումբ

Նպատակը- Սովորեցնել զրուցել տրված թեմայի շուրջ՝ ձևավորել հարգանք աշխատանքի նկատմամբ, բառապաշարը հարստացնել նոր բառերով, զարգացնել քերականորեն ճիշտ, կապակցված խոսելու , հարցերին պատասխանելու կարողություն, հետաքրքրություն և հարգանք դաստիարակել տարբեր մասնագիտությունների հանդեպ:

Նախապատրաստական աշխատանք- Երեխաներին ընթերցել Գ. Ասրյանի <<Դերձակը>> բանաստեղծությունը:

Ասեղ է առել

Կարում, արդուկում,

Դերձակ է դարձել,

Սուրիկը բակում:

Քույրիկն է գալիս՝

Անունը՝ Թամար

-Մի մուշտակ կարիր

Արջուկիս համար:

-Ահա ձեզ կատա՞կ,

Մուշտակ՝ արջուկի՞ն,

Չէ՞ որ նա մուշտակ

Ունի իր հագին:

-Տիկնիկիս համար

Շոր կարիր կարգին:

-Այդ մասին Թամար,

Դիմիր մայրիկին:

Անհրաժեշտ նյութեր՝ տարբեր մասնագիտական գործիքներ, մասնագիտություններ պատկերող նկարներ:

Դ.- Երեխանե՛ր այսօր, երբ եկաք պարտեզ , ամենուր նկարներ էին, գործիքներ: Ի՞նչ եք տեսնում նկարներում:

Ե-...

Դ.- Իսկ ինչի մասին էր իմ ընթերցած բանաստեղծությունը

Ե-...

Դ.- Այստեղ պատկերված նկարներից, որ՞ն է ընթերցած ոտանավորին

Ե-...

Դ.- Իսկ դերձակը ին՞չ գործիքներով է աշխատում, (թել, ասեղ, մկրատ, կտոր, կարի մեքենա)

Ե-...

Դ.- Արմե՛ն, ցույց տուր այդ գործիքները

Դ.- Երեխաներ՛, ճիշտ ցույց տվեց Արմենը

Ե-...

Դ.- Երեխաներ եկեք այսօր զրուցենք տարբեր մասնագիտությունների մասին:

Ու՞րիշ ի՞նչ եք տեսնում նկարներում

Ե-...

Դ.- Ինչով է բժիշկը ստուգում հիվանդի ջերմությունը

Ե-...

Դ.- Էլ ինչե՞ր է օգտագործում հիվանդին բուժելու համար (ներարկիչ, դեղեր ...)

Ե-...

Դ.- Ի՞նչ է պետք շինարարին՝ շենքեր կառուցելու համար (քար,ավազ,ներկ,վրձին, տրակտոր, բահ, վերամբարձ կռունկ)

Ե-...

Դ.- Եկեք այս նկարը դիտենք և տեսնենք կահույքագործի սեղանին ինչ գործիքներ կան դրված (սղոց,մեխ, փայտ, ուրագ)

Ե-...

Դ.- Ի՞նչ է պետք խոհարարին՝ ճաշ պատրաստելու համար (դանակ,գդալ,կաթսա,թավա, գազօջախ, սննդամթերք)

Ե-...

Դ.- Ինչո՞վ է վարորդը մարդկանց տեղափոխում (երթուղային տաքսիով, ավտոբուսով, տրոլեյբուսով, ավտոմեքենայով)

Ե-...

Դ.- Բոլորդ էլ ճիշտ եք երեխաներ, իսկ այն մարդը , ով իր գործը լավ է կատարում ասում են վարպետ

Ֆիզ. դադար- Մեր ձեռքերն են՝

Աջ ու ձախ,

Աշխատանքից չունեն վախ

Չէ որ ամեն մարդ գիտի՝

Ով աշխատի , նա կուտի:

Կրկնել երկու անգամ

Դ.- Իսկ դուք գիտեք, թե ձեր ծնողները ինչ մասնագիտություն ունեն

Ե-...

Դ.- Իսկ ինչ կլինի , եթե բոլորը լինեն բժիշկներ, բոլորը լինեն վարորդներ, դերձակներ, իսկ հացթուխներ չլինեն

Ե-...

Դ.- Ի՞նչ կլինի, եթե վարորդը մեքենա վարել չկարողանա

Ե-...

Դ.- Ինչ կլինի եթե բժիշկը սխալ բուժի հիվանդին և այլն:

Ե-...

Դ.- Այստեղից էլ գալիս է այս արտահայտությունը.

<<Չկա վատ մասնագիտություն, բոլոր մասնագիտություններն էլ կարևոր են>>: Եվ կարևոր չի թե ինչ ես անում, կարևորը ամեն մեկը լինի իր գործի վարպետը:

Դ.- Իսկ հիմա, յուրաքանչյուրդ ձեր սիրելի մասնագիտությունն ընտրեք և խաղացեք

Այդ ընթացքում դաստիարակը շրջում է խմբով և ինքն էլ ընդգրկվում խաղերի մեջ:

Դ.- Բարև ձեզ, սա հիվանդանո՞ց է, ես ճիշտ եմ եկել:

Ե-...

Դ.- Իմ գլուխը ցավում է, խնդրում եմ, կչափեք իմ արյան ճնշումը, դեղորայք կտաք, գուցե ջերմություն ունեմ:

Ե-...

Դ.- Շնորհակալություն, դուք ինձ շատ օգնեցիք

Դաստիարակը կրկին շրջում է խմբասենյակում

Դ.- Բարև ձեզ , դուք վարսավի՞ր եք

Ե-...

Դ.- Իսկ ի՞նչ գործիքներով եք աշխատում

Ե-...

Դ.- Շնորհակալություն, դուք ինձ գեղեցիկ հարդարեցիք:

Եվ այդպես դաստիարակը ինքն էլ ընդգրկվելով խաղի մեջ խթանում է հետաքրքրասիրություն, խոսքի զարգացման զարգացմանը, ուժեղացնում երեխաների խաղը պլանավորելու և ինքնուրույն ընտրելու ունակությունը:

Եզրակացություն

Պարապմունքին ներկա էին մեթոդիստը և երկու դաստիարակ: Նրանք հայտնեցին իրենց կարծիքները:

Մեթոդիստ- Դաստիարակը հասավ իր նպատակին, ակտիվացրեց բառապաշար, հետաքրքրություն և հարգանք առաջացրեց տարբեր մասնագիտությունների հանդեպ:

Դաստիարակ Ք. Խաչատրյան- Դաստիարակը զարգացրեց հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունը: Ինձ դուր եկավ ասացվածքի տեղին օգտագործումը:

Դաստիարակ Վ. Խնկոյան - Ձևավորեց աշխատանքային հմտություն: Խաղը որպես գործունեության առաջատար ձև, դաստիարակը խաղով մատուցեց նյութը:

Այսպիսով, հետազոտական աշխատանքի ավարտին եկա այն եզրակացության , որ դերային խաղերը զգացմունքայնորեն հագեցած են: Ընդգրկվելով խաղերի մեջ , դառնալով նրանց մի մասնիկը, երեխաների մեջ ձևավորեցի ընկերասիրություն, երկխոսության մեջ մտնելու կարողություն, վստահություն:

Գրականության ցանկ

1. Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր (էջ 111)

2. Ն/դ մանկավարժություն Է. Ա. Ալեքսանյան (էջ 190)

3. Krupskaya N.K. Խաղի դերը մանկապարտեզում // Պեդ.օր.-Մ 1980- էջ 263

4. Բոյչենկա Ն. Ա. և այլոք:

Դերախաղ խաղեր ն/դ տարիքի երեխաների համար 1982թ. 112 էջ

;